ՏԵՂԵԿԱՆՔ

Կ-826[1]-28.12.2020-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~*ՀՈԴՎԱԾ 1.* Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության ՀՕ-139-Ն օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 132-րդ հոդվածի 1-ին մասում «բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով» բառերից հետո լրացնել «եւ 222.19 հոդվածի 1-ին մասում նախատեսված դեպքում» բառերով:~~

~~*ՀՈԴՎԱԾ 2.* Օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասում «բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով» բառերից հետո լրացնել «եւ 222.19 հոդվածի 4-րդ մասում նախատեսված դեպքում» բառերով:~~

~~*ՀՈԴՎԱԾ 3.* Օրենսգրքի~~ 5-րդ բաժինը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 31.6 գլխով.

«ԳԼՈՒԽ 31.6

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԿԱՄ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԿԱՄ ԱՊԱՍՏԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՅՑՈՎ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ, ԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ~~ՎԱՐՈՒՅԹԸ~~ԳՈՐԾԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 222.17. Ազատությունը սահմանափակված կամ ազատությունից զրկված օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից փախստականի կարգավիճակ կամ ապաստան տրամադրելու հայցով իրավասու մարմինների կողմից կայացված որոշումների իրավաչափությունը վիճարկելու, բարենպաստ վարչական ակտ կայացնելու վերաբերյալ գործերը

1. ~~Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կարող է դիմել Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատած կամ օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա օտարերկրացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, ում ազատությունը օրենքով սահմանված կարգով սահմանափակված կամ ով ազատությունից զրկված է կամ ում նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում ՀՀ տարածքում, ապաստանի հայցի կամ փախստականի կարգավիճակի ճանաչման վերաբերյալ «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքով սահմանված լիազոր մարմնի կայացրած բացասական որոշումը վիճարկելու կամ բարենպաստ վարչական ակտ կայացնելու պահանջով:~~

Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կարող է դիմել այն օտարերկրացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, ով ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, կամ ում նկատմամբ քրեական հենտապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ով ենթակա է հանձնման օտարերկյա պետությանը՝ ապաստանի հայցի կամ փախստականի կարգավիճակի ճանաչման վերաբերյալ

«Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքով սահմանված լիազոր մարմնի կայացրած անբարենպաստ վարչական ակտը վիճարկելու կամ բարենպաստ վարչական ակտ կայացնելու պահանջով:

~~2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով գործերի քննության եւ դրա արդյունքում կայացված դատական ակտի վերաքննիչ եւ վճռաբեկ վերանայման վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր դրույթները, եթե սույն գլխով այլ բան նախատեսված չէ:~~

ՀՈԴՎԱԾ 222.18. Վարչական դատարան դիմելը եւ գործերի քննության ժամկետները

1. Սույն օրենսգրքի 222.17 հոդվածի 1-ին մասում նշված գործերով վարչական դատարան հայցադիմում կարող է ներկայացվել «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքով սահմանված լիազոր մարմնի կայացրած անբարենպաստ վարչական ակտի ~~բացասական որոշման~~ մասին իրազեկվելու ~~տեղեկանալու~~ օրվանից սկսած՝ 15 ~~0~~ օրվա ընթացքում:

2. Պատասխանողը հայցադիմումի պատասխան կարող է ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին վարչական դատարանի որոշումը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում:

3. Վարչական դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու օրվանից մեկամսյա ժամկետում սույն օրենսգրքով սահմանված կարգով պարտավոր է քննել եւ կայացնել ու հրապարակել գործն ըստ էության լուծող դատական ակտ:

ՀՈԴՎԱԾ 222.19. Վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքարկման ժամկետները

1. Սույն օրենսգրքի 222.18 հոդվածի 3-րդ մասում նշված գործով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն ~~ը~~ օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 15~~0~~ օր հետո եւ նույն ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննության կարգով ~~այդ ակտը հրապարակվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում~~:

2. Վերաքննիչ բողոքի պատասխան կարող է ներկայացվել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը ստանալուց հետո՝ մինչեւ գործի դատաքննությունը:

3. Վերաքննիչ դատարանը բողոքը քննում եւ համապատասխան որոշում է կայացնում ու հրապարակում՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու պահից մեկամսյա ժամկետում ~~վարչական դատարանից գործը ստանալու պահից 15-օրյա ժամկետում~~:

4. Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և այդ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում: ~~5-օր հետո եւ կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով այդ ակտը հրապարակվելուց հետո՝ 5-օրյա ժամկետում~~: Վճռաբեկ դատարանը սույն գործերով վարույթ ընդունելու որոշումը կայացնում է 15-օրյա ժամկետում և նույն ժամկետով կարող է կասեցնել վերաքննիչ դատարանի որոշման կատարումը:

5. Վճռաբեկ դատարանը բողոքը քննում եւ համապատասխան որոշում է կայացնում ու հրապարակում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու պահից՝ 10 ~~5~~-օրյա ժամկետում ~~վերաքննիչ դատարանից գործը ստանալու պահից 5-օրյա ժամկետում~~:

~~*ՀՈԴՎԱԾ 222.20.* Ազատությունը սահմանափակված կամ ազատությունից զրկված օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից փախստականի կարգավիճակ կամ ապաստան տրամադրելու հայցով իրավասու մարմինների կողմից կայացված որոշումների իրավաչափությունը վիճարկելու, բարենպաստ վարչական ակտ կայացնելու վերաբերյալ վարույթի իրականացման կարգը~~

~~1. Դատարանը սույն գլխով սահմանված վարույթն իրականացնում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն գլխի դրույթներով:~~

ՀՈԴՎԱԾ 2 ~~4. Անցումային եւ եզրափակիչ դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող հինսուներորդ ~~տասներորդ~~ օրը:

~~2. Սույն վարույթով սահմանված իրավանորմերը տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված գործերի նկատմամբ:~~

~~3.Սույն օրենսգքրի 222.19-րդ հոդվածը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված վերաքննիչ եւ վճռաբեկ վարույթների նկատմամբ:~~